


Գատական իշխանության ընդհանուր հայեցակարգային մոտեցումները

Ալոյան Լևոն Գ.

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ՀՀ քննչական կոմիտեում քննիչ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0002-1222-4418>
levon_aloyan97@mail.ru

ՀՏԳ՝ 342.56; EDN: GKLNGI

DOI: 10.58587/18292437-2025.1-53

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ դատական իշխանություն, հայեցակարգային մոտեցումներ, արդարություն, օրինականություն, դատական վերահսկողություն, վարչարարություն, սուբյեկտ, նորմաստեղծ գործունեություն, իրավագիտակցություն, դատաիրավական քաղաքականություն, դաստիարակության գործառույթ

Общие концептуальные подходы судебной системы

Алоян Левон Г.

Соискатель Института философии, социологии и права НАН РА,
Следователь Следственного комитета Республики Армения (Ереван, РА)

Аннотация. В данной статье подробно рассмотрены особенности современных концептуальных подходов к судебной власти.

В статье подчеркивается, что современные концептуальные подходы придают новые оттенки сущности, функциональным полномочиям и миссии судебной власти.

Согласно современным концептуальным подходам, судебная власть рассматривается не только как субъект, осуществляющий правосудие, но и как субъект, осуществляющий контроль за управлением исполнительной властью и законностью ее актов, субъект нормотворческой деятельности. Судебная власть также является социальным институтом, определяющим основные направления судебной политики, формирование и развитие правосознания в обществе, а также воспитательную функцию для широкого круга взрослых.

Ключевые слова и словосочетания: судебная власть, концептуальные подходы, правосудие, законность, судебный контроль, администрирование, субъект, нормотворческая деятельность, юриспруденция, судебная политика, образовательная функция

The State of the RA Judicial System at the Present Stage of Society Development

Aloyan Levon G.

Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law NAS RA,
As an investigator in the Investigative Committee of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. The present article discusses in detail the current state of the judicial system of the Republic of Armenia and issues related to its improvement and development. It notes that previous "reforms" related to the judicial system did not produce the expected results, as they were implemented piecemeal and lacked consistency and justification. The article recommends undertaking judicial reform systematically and comprehensively, considering the contemporary societal opinion regarding this institution.

Keywords & phrases: justice, judicial system, increasing efficiency, judicial reform, public opinion, systematic approach

Գատական իշխանության ժամանակակից հայեցակարգային մոտեցումները նոր երանգներ են հաղորդում այդ իշխանության էության, գործառույթային լիազորությունների և առաքելության վերաբերյալ:

Եթե առաջներում դատարանը դիտում էին միայն սուբյեկտների միջև իրավական կամ սոցիալական վեճեր լուծող պետական մարմին, ապա ժամանակակից ընկալումներում դատական իշխանությունը դիտարկվում է ոչ միայն

վեճեր լուծող պետական ինստիտուցիոնալ հաստատություն, այլև սոցիալական կյանքում ավելի ընդգրկում դերակատարում, մասնավորապես՝ որպես գործադիր իշխանության մարմինների վարչարարության նկատմամբ վերահսկողություն իրականացնող, որպես մինչ-դատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սուբյեկտ, որպես նորմաստեղծ, նորմամեկնաբանող, որպես պետական մարմինների ակտերի օրինականությունը լու-

ծող, որպես իրավապաշտության մարմին և այլն: Դատական իշխանության հեղինակությամբ չափվում է տվյալ պետության իրավական կամ ոչ իրավական լինելը, օրենքի (իրավունքի) գերակայության խնդրի ապահովման, ներդրումային քաղաքականության երաշխավորվածության հարցերը և այլն:

Հետևաբար, ժամանակակից իրավագիտությամբ բացահայտված դատական իշխանության չափորոշիչները դեռևս բավարար չեն դրա իշխանական կառուցվածքի ընկալման համար: Դատական իշխանությունը հաճախ սահմանվում է որպես միայն դատական մարմինների համակարգ: Համապատասխանաբար դատական իշխանության բնութագիրը ծավալվում է դատական համակարգի բնութագրության, դատարանի գործունեության և կազմակերպման սկզբունքների, դատավորների իրավական կարգավիճակի, պետական այլ մարմինների հետ դատարանի համագործակցության համատեքստում: Երբեմն դատական իշխանության սահմանումը կապվում է վերջինիս իր գործառնության հետ [1]: Գործառնական մոտեցման դեպքում դատական իշխանությունը սահմանվում է որպես դատելու իշխանություն, այսինքն իրավունքի վերաբերյալ դատական նիստերում, վեճերի քննության և լուծման դատարանի գործունեություն: Ժամանակակից մասնագիտական գրականությունում առաջարկվել է բացատրել այս երկու մոտեցումները և սահմանել դատական իշխանությունը որպես հատուկ ընթացակարգի կիրառությամբ հասարակությունում ծագած կոնֆլիկտների լուծման բացառապես դատարաններին՝ պատկանող իրավասություն: Այս մոտեցումները ընդգծում են, ըստ մեր տեսանկյան առաջին հերթին դատական իշխանության բնութագրության արտաքին կողմը և ամրագրում մի շարք հատկանշներ, որոնք ակնհայտ են ընկալման համար՝ 1) ով է իրականացնում դատական իշխանությունը (դատարանները), 2) ինչո՞ւ է կայանում դրա իրականացումը (կոնֆլիկտների լուծման մեջ), 3) ինչպե՞ս է դա իրականացվում (հատուկ գործառնությամբ): Դժբախտաբար նման սահմանումները հնարավորություն չեն ընձեռում հասկանալ, ինչու է դատարանների տվյալ գործունեությունը՝ հանդիսանում իշխանություն, ինչով է պայմանավորված դրա իշխանական բնույթը, կարող է արդրոք դատական իշխանությունը դիտարկվել որպես պետական իշխանության ճյուղերից մեկը: Այստեղից բացահայտ չէ նաև դրա հարաբերակցությունը՝ պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի հետ, և դրա տարբերությունը իշխանության տվյալ ճյուղերից:

Հաճախ դատական իշխանության հասկացության սահմանման փորձի դեպքում դիմում են

բառարաններում տրված «իշխանություն» բառի ստուգաբանական իմաստին, որոնցում իշխանությունը սահմանվում է, օրինակ, ինչպես, 1) «ինչ-որ բանով կամ ինչ-որ մեկով տնօրինման, սեփական կամքին ենթակայեցման իրավունք և հնարավորություն», 2) քաղաքական պետություն, պետական կառավարում դրա մարմիններ, 3) «կառավարական, վարչական իրավասություններով ապահովված անձինք» կամ ինչ-որ միջոցների կամքի, հեղինակության, իրավունքի, բռնության օգնությամբ մարդկանց գործունեության, վարքագծի վրա վճռորոշ ազդեցություն ունենալու ունակություններ և հնարավորություններ [11, էջ 229]: Դատական իշխանությանը նման սահմանումների հարմարեցումը [6, էջ 33; 12] հնարավորություն է տալիս ամրագրել դրա որոշ էական գծերը. 1) դատարանի որպես իշխանական սուբյեկտ այլ սուբյեկտների նկատմամբ ազդեցության հնարավորությունը և կարողությունը, 2) այդ ազդեցության իրավակիրառ բնույթը, 3) օրենքի շրջանակներով այդ ազդեցության սահմանափակումը, 4) դրա որոշակի նպատակաուղղվածությունը: Սակայն դատական իշխանության իշխանական արտահայտումներն պետական ստրիքուտային բնույթը դեռևս բացահայտված չեն: Բերված սահմանումները հնարավորություն չեն ընձեռնում ընկալել նաև դատական իշխանության պատմական փոփոխությունը:

Դատական իշխանության էության բացահայտման համար անհրաժեշտ է առանձնացնել հիմնարար տարրերը, որոնցից բխում է դրա բնույթը: Առաջինը, դատական իշխանությունը հանդիսանում է որպես այդպիսին իշխանության տարատեսակ, հետևաբար դրան բնորոշ են իշխանության էությունը սահմանող ընդհանուր բնութագրիչներ և գծեր: Երկրորդը, դատական իշխանության վերաբերյալ հարցը գրավում է հետազոտողների ուշադրությունը պետությունում իշխանությունների բաժանման տեսության համատեքստում, որտեղ վերջինիս հաղորդվում է պետական իշխանության ճյուղերից մեկի արժեք: Պետությանը դատական իշխանության ստրիքուտային պատկանելիությունը, պետական իշխանության ճյուղերի շարքում դրա դիրքը սահմանում են դրա բնույթի երկրորդ տարրը և համապատասխան բնութագրիչները: Ի վերջո, դատական իշխանության էությունը կանխորոշող երրորդ տարր դառնում է դրա սեփական դատական (արբիտրաժ) բնույթը, ինչն էլ տարբերակում է այն պետական իշխանության այլ ճյուղերից: Հատկապես այս երեք տարրերի համակարգային միասնությունն և փոխկապվածությունը հնարավորություն է ընձեռնում բացահայտել դատական իշխանության էությունը:

Որոշակի բարդություն է ներկայացնում որպես իշխանության տարատեսակություն դա-

տական իշխանության բնութագրությունը: Իշխանությունը՝ այնքան բազմաբնույթ երևույթ է, որ դրա միասնական սահմանում մինչ այժմ ձևակերպել չի հաջողվել: Փիլիսոփայական և քաղաքագիտական գրականությունում նույնիսկ կարծիք է արտահայտվել իշխանության հասկացության սկզբունքային «անորոշության» և նրա վերաբերյալ, որ իշխանության հասկացությունը «վիճելի է իր էությանը» [9, էջ 37]: Որոշ հեղինակների կարծիքով իշխանությունը այնպիսի հասկացություն է, որը վեճեր մշտապես է ծնելու [4, էջ 41]: Իշխանության մեկ համապարփակ սահմանումով իշխանության օբյեկտիվ դժվարությունը էական բարդեցնում է նման դեֆինացման միջոցով դատական իշխանության որպես իշխանության տեսակներից մեկի սահմանում: Այդ իսկ պատճառով իշխանության էության բացահայտումը հնարավոր է ոչ թե իր դեֆինացման սահմանամբ, այլ դրա էական գծերի կամ հատկությունների բացահայտման, վերլուծության և նկարագրման ուղիով: XX դարի կրատողգիական¹ գրականությունը առանձնացնում, քննարկում և վիճարկում է իրավունքի տարատեսակ հատկությունները: Այս առումով, կանգ առնենք իշխանության այն ընդհանուր հատկություններին, որոնք ընդունվում և նշվում են գործնականում բոլոր հետազոտողների կողմից: Այդ հատկությունները կազմում են իշխանության էական բնութագրիչները, իսկ հետևաբար, դրանք պետք է բնորոշ լինեն նաև դատական իշխանությանը:

«Իշխանության» եզրույթի գեթե բոլոր հետազոտողները իշխանության հատկության իմաստով ընդունում և նշում են դրա սոցիալական բնույթը, առանձնահատկությունները, որոնք իշխանությունը տարբերակում են ազդեցությունից, իշխանության բովանդակության կարգավորվածությունը և դրանում այնպիսի տարրերի առկայությունը, ինչպես սուբյեկտը, օբյեկտը, դրանց միջև տիրապետման-ենթակայության բովանդակությունը, իշխանության նպատակաուղղված և կամային բնույթը, հանրություն դրա կազմակերպիչ սկիզբը, իշխանության հարկադրական բնույթը, դրա օբյեկտիվությունը և օրինականությունը: Այս բնութագրիչներից յուրաքանչյուրը որոշակիորեն առկա և արտահայտվում է դատական իշխանությունում, ինչն էլ կազմում է դատական իշխանության էությունը, իշխանական տարրը: Իշխանական բնութագրիչների հաշվառումը անհրաժեշտ է ոչ միայն դատական իշխանության տեսության ընկալման, այլ նաև դատավարական և դատակառուցողական՝ կիրառական հարցերի լուծման համար, դրանք ունակ են ապահովել պետական իշխանության մարմին-

ների համակարգում վերջինիս առանձնացումն և մեկուսացումը: Ժամանակակից պայմաններում դատական իշխանությունները՝ որպես նվազագույն պետք է ապահովեն իրական ինքնուրույնություն, անկախություն, օրենսդրական և գործադիր իշխանության մարմինների հետ հարաբերություններում պարիտետ կարգավիճակ՝ առանց որի դատական իշխանությունը ունակ չի լինի ապահովել իրավունքով պետության ինքնասահմանափակումը:

Դատական իշխանությունը, առանձնանալով և մեկուսանալով պետական իշխանության համակարգում, միաժամանակ պահպանում է իր պետական իշխանության ատրիբուտային պատկանելիությանը [5]: Այդ իսկ պատճառով դատական իշխանության բնութագրությունում պետաիրավական բաղադրիչը ձեռք է բերում հատուկ նշանակություն և արդիականություն: Դատաբանները, լուծելով իրավական կոնֆլիկտներ, հռչակում են իրենց որոշումները պետության անունից, այսինքն իրականացնում են պետական իշխանություն, արտահայտված իրավունքի նորմերում: Միևնույն ժամանակ դատական իշխանությունը լիովին կախված չէ իշխանության կրողի ինքնորոշումից, այս կամ այն հարցերում նրա դիրքորոշումներից, քանի որ այն կապված է նորմերով և օրենքներով, որոնք էլ հնարավոր չէ յուրաքանչյուր դեպքում փոփոխել իշխանության կրողի հայեցողությամբ: Դատական իշխանությունը, լուծելով կոնֆլիկտները, պետական իշխանության մեխանիզմում կոչված է ապահովելու իրավունքի պաշտպանությունը: Միաժամանակ ժամանակակից իրավական պետությունում դատական իշխանության գործառույթները բարդեցվում են, մի կողմից՝ այն դրսևորում է պետական իշխանությունը և դրա մարմինները իրավունքի շրջանակներում, մյուս կողմից՝ ուժեղացնում դրանք ապահովելով՝ իրավական կայունությունը և պաշտպանելով պետական իշխանության իրավական հիմքերը:

Պետական իշխանության բաժանումը օրենսդիր, գործադիրի և դատականի չի նշանակում, որ միասնական պետական իշխանությունը դադարում է գոյություն ունենալ որպես ամբողջություն և բաժանվում է մասերի: Իշխանության միասնությունը պայմանավորված է դրա կրողի միասնությամբ, որը հանդիսանում է ժողովուրդը: Իշխանության բաժանումը կատարվում է միայն կազմակերպչական-իրավական և գործառնական ասպեկտներում: Բաժանվում են պետական իշխանության գործունեության ոլորտները և դրանց համաձայն կառուցվում իշխանության մարմիններ, դրա իրականացման մեթոդներ, եղանակներ, սահմանվում են թափանցիկ կարգերից յուրաքանչյուրի գործառույթները: Առանձնանում են հարաբերական, մեկուսացված և ինքնուրույն պետական

¹ Կրատողգիա՝ գիտություն իշխանության մասին:

իշխանության ճյուղեր, իսկ «իշխանության ճյուղ» արտահայտությունը հանդիսանում է առավել ճշգրիտ, քանի որ ներառում է պետական իշխանության գործման, շարժման վեկտորի նշում:

Այս իմաստով դատական իշխանությունը, հանդիսանալով պետական իշխանության պարտադիր ատրիբուտներից, ճյուղերից մեկը, իրենում կրում է դրա անբաժանելիության ինքնավարության բոլոր գծերը, իսկ պետականությունը հանդիսանում է դատական իշխանության անբաժանելի էական գիծ: Պետականության հատկությունից զուրկ դատարանը չի կարող հանդիսանալ պաշտպանության միջոց, քանի որ առանց պետական հարկադրանքի դատական իշխանությունը անիմաստ է: Հատկապես պետականության հետ, դատական իշխանության ատրիբուտային կապի ուժով կոնֆլիկտի կողմերը դատարանի միջոցով կարող են որոնել իրենց իրավունքների պաշտպանությունը պետության մոտ, իսկ պետությունը, ապահովելով՝ դատարանի գործանելությունը դրանով իսկ ի դեմս դատարանի ստեղծում է միջոց, որը անհրաժեշտ է խստված իրավունքի պաշտպանման համ: Ակիրաժեշտ է հաշվի առնել, որ պետական իշխանությունը իրականացնում է հասարակության կյանքի կազմակերպման և կանոնակարգման, հասարակությունում խաղաղության պահպանության, քաղաքացիների իրավունքների պաշտպանության կարևոր գործառնություններ Առանց դատական իշխանության պետությունը չի կարող իրականացնել տվյալ գործառնությունները իրավունքի շրջանակներում:

Եթե առանձին պետական մարմիններ կամ պաշտոնատար անձինք խախտում են իրավունքը, նրանց գործողությունները կարող են վերածվել դատարանում՝ քննության առարկայի: Դատարանի պետական իշխանության առկայությունը հնարավորություն է տալիս լուծել վեճերը պաշտպանել խախտված իրավունքները, զսպել իրավունքի շրջանցման ցանկացած փորձ: Այսպիսով, դատական իշխանությունը չի կարող գոյություն ունենալ պետությունից դուրս, ինչպես նաև պետությունը ունակ չէ իրականացնել իր գործառնությունները առանց դատական իշխանության: Ժամանակակից պետության կողմից դատական իշխանության արժեքավորության ընդունումը և վերջինի ինքնուրույնության գաղափարի գիտակցումը նշանակում է, որ դատական իշխանությունը, մնալով պետական իշխանության անբաժանելի ատրիբուտ, ժամանակակից պետության կողմից կիրառվում է նաև որպես իրավունքով ինքնասահմանափակման միջոց [8, էջ 49; 9, էջ 15; 13, էջ 107]:

Ի վերջո, դատական իշխանության էությունը կանխորոշող երրորդ տարր է դրա դա-

տական առաքելությունը, որը դատարանին դնում է իրավունքի վերաբերյալ վեճում հատուկ լիազորված արբիտրի կարգավիճակում:

Դատական իշխանությունը, ըստ էության, իրավունքի մասին, իրավունքի հիման վրա և հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում դատելու, իշխանություն է: Դասական իշխանությանը չեն կարող առաջադրվել, օրինակ բարոյական գաղափարների կամ տեսանկյունների ճշտության, նպատակահարմարության, շահերի և օգուտի մասին դատելու խնդիրներ, եթե դա չի շոշափում իրավահարաբերությունների ոլորտները:

Անհերքելի է, որ դատական իշխանության իրականացումը առավելապես ուղղված է սոցիալ-իրավական վեճերի լուծմանը, սակայն պետք է նկատի ունենալ, որ բացի սոցիալական վեճեր լուծելուց, դատական իշխանություն իրականացնելիս, դատարանները հաստատում են իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը, իրավական վիճակներ և այլն: Ինչպես հավաստիորեն նշում են Գ.Ղազինյանը և Ս.Դիլբանդյանը [3, էջ 4]:

Դատական իշխանությունը կարելի է բնորոշել որպես պետության հատուկ մարմինների բացառիկ իրավազորություն, որը հանգում է հատուկ դատավարական ձևերով սոցիալական հակասությունների քննությանը և լուծմանը, ուղղված է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը և վերականգնմանը: Դատական իշխանությունն իրականացվում է արդարադատության ձևով (սահմանադրական, վարչական, քաղաքացիական և քրեական), և նրա հիմնական գործառնությունը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն է»:

Իրավունքի գերակայության ապահովումը, մարդու և քաղաքացիների իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանությունը հնարավոր է միայն անկախ դատական իշխանության գործունեության պայմաններում [2, էջ 34; 7]: Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված դատական իշխանության մարմինների համակարգը գործնականում պետք է լինի անկախ դատական իշխանություն, որը ոչ միայն ունակ կլինի հակակշռելու իշխանության մյուս ճյուղերին /օրենսդիր և գործադիր/, այլ նաև արդյունավետ կիրականացնի մարդու իրավունքների պաշտպանությունը:

Կասկածից վեր է, որ իրավունքի գերակայության սկզբունքը կմնա որպես վերացական ցանկություն, եթե գործնականում կյանքի չկոչվի մարդու սահմանադրական իրավունքների անմի-

ջական գործողության և դրանց երաշխավորված պաշտպանության, պահանջը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Հարությունյան Գ. Գ.** Դատական իշխանության համակարգային գործակցության Եվրոպական զարգացումների փորձից: – Երևան, «Նժար», 2002:
2. **Հարությունյան Գագիկ** Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները. – Երևան, 2003:
3. **Ղազինյան Գագիկ, Գիրանդյան Սամվել.** Դատական իշխանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. // Օրենք և իրկանություն, 8 սարիլ, 2002:
4. **Болл Т.** Власть // Полис. 1993. 5.
5. **Воскобитова Л. А.** Теоретические основы судебной власти. – М.: Изд.-во «Норма», 2017.
6. **Гуценко К. Ф. Ковалев М. А.** Правоохранительные органы. Учебник для студентов юридических вузов и факультетов. – М.: БЕК, 1995. – 320 с.
7. **Ершов В. В.** Статус суда в правовом государстве. – М., 1992.
8. **Нерсисянц В. И.** Идеи и конструкции правовой государственности, история и современность // Социалистическое правовое государство: концепция и пути развития. – М., 1990.
9. **Петрухин И. Л.** Проблема судебной власти современной России // Государство и право. 2000. №7.
10. **Райгородский Д. Я.** Психология и психоанализ власти: хрестоматия: в 2 Т. Т. 1. – Самара, 1999.
11. Советский энциклопедический словарь. – М., 1983.
12. Судопроизводство и правоохранительные органы Российской Федерации: учебник / под ред. В Лазарев. М, 1997.
13. **Тритвитткоров Е. К.** Варг в грана // Нву. р. хоһрр тесoint В 2, СІТУ. Сraspoon, 1895.

Տճանա/Հանձնվել է՝ 07.02.2025

Քեցենզիրովանա/Գրախոսվել է՝ 13.02.2025

Քրինյա/Ընդունվել է՝ 19.02.2025